

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

2014 ԹՎԻՆ Առողջապահական Խնամքի Փոփոխություններ Են Սպասվում



Նոր Բարելավումներ Առողջության Ապահովագրության Շուկայում

Patient Protection and Affordable Care Act (Affordable Care Act)-ը 2010 թվականին ընդունված դաշնային մի օրենք է, որը մատչելի առողջության ապահովագրություն է տրամադրում ավելի շատ ամերիկացիների:

Այս պատմական օրենքը կփոխի ինչպես ապահովագրական ընկերությունների կողմից ծառայությունների տրամադրման, այնպես էլ սպառողի կողմից դրանց գնման ձևեր: Այս տեղեկատվական թերթիկը կպատմի առողջության ապահովագրության ոլորտում տեղի ունեցող մի քանի փոփոխությունների մասին:



Կարևոր փոփոխություններ սպառողների համար

Առողջության ապահովագրության ավելի շատ տարբերակներ: Affordable Care Act-ը ստեղծում է նահանգային շուկաներ, որտեղ անհատները եւ փոքր ձեռնարկությունները կարող են առողջության ապահովագրություն գնել առցանց, հեռախոսով կամ անձամբ: Այս շուկաները կնպաստեն, որ առողջության ապահովագրությունը դառնա ավելի մատչելի եւ հասանելի: Կալիֆորնիայի շուկան, որը կոչվում է Covered California™, միլիոնավոր կալիֆորնիացիներին կառաջարկի առողջության ապահովագրության մի շարք ծրագրեր, որոնք հնարավոր կլինի գնել:

Հասանելի Ապահովագրություն եւ Ֆինանսական Աջակցություն: Covered California-ն կօգնի անհատների եւ ընտանիքների տեղեկանալ, թե արդյոք նրանք իրավասու են ստանալու կառավարական դրամական աջակցություն, որը կնվազեցնի առողջության ապահովագրության գինը, կամ՝ առողջության ապահովագրություն՝ Medi-Cal-ի միջոցով: Բազմաթիվ փոքր ձեռնարկություններ նույնպես ի վիճակի կլինեն առողջության ապահովագրություն տրամադրել իրենց աշխատողներին՝ օգտագործելով կառավարական հարկային վարկերը, որպեսզի նվազեցնեն ապահովագրական ծախսերը:

Սպառողների Պաշտպանություն: Առողջության ապահովագրության բոլոր ծրագրերը (բացի մինչեւ մարտի 10, 2010 թվականը վաճառվածների մեծ մասից) պետք է հոգան անհատների եւ նրանց ընտանիքների առողջության խնամքի ծախսերը, նույնիսկ, եթե նրանք նախկինում ունեցել են այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են շաքարախտը կամ աթթման: Առողջության այդ ապահովագրությունը չի կարող մերժվել, եթե անձը հիվանդանա: Սպառողները նաեւ չեն կարող մերժվել, եթե դիմելու ընթացքում կատարել են չկանխամտածված սխալ:

Ապահովագրության Ընդլայնում: Affordable Care Act-ը հզորացնում է Medicare-ը, Medicaid-ը (Medi-Cal-ը Կալիֆորնիայում) եւ միլիոնավոր մարդկանց համար կենսական կարևորություն ներկայացնող այլ ծրագրերը: Աւելին, ում 26 տարին դեռ չի լրացել, եւ ում ծնողներն ունեն առողջության ապահովագրություն, այժմ կարող են ապահովագրվել իրենց ծնողների ծրագրի շրջանակներում:

Տուգանքներ Ապահովագրված չլինելու համար: 2014 թվականի հունվարից

Այս փոփոխությունները կատարվել են առողջության ապահովագրության ոլորտում, ապահովելու համար, որ սպառողները ստանան իրենց անհրաժեշտ խնամքը, երբ որ դրա կարիքն ունենան:

սկսած՝ չափահասների մեծամասնությունը պարտադիր պետք է ունենա պետական կամ մասնավոր ընկերությունների կողմից տրամադրված բժշկական ապահովագրություն, հակառակ դեպքում կտուգանվի: Տուգանքի չափը երեք տարիների ընթացքում կդառնա ավելի մեծ: 2014 թ. յուրաքանչյուր անձի տուգանքի չափը կկազմի տարեկան եկամտի 1 տոկոսը կամ \$95 նայած, թե որն է ավելի մեծ: Երեխաներ ունեցող չափահասների տուգանքի չափը ապահովագրություն չունեցող յուրաքանչյուր երեխայի համար \$47.50 է: Մինչեւ 2016 թ. տուգանքի չափը կհասնի եկամտի 2,5 տոկոսին կամ \$695-ի՝ յուրաքանչյուր անձի եւ \$2,085 ընտանիքի համար՝ նայած, թե որն է ավելի մեծ:

Ձեռնարկատերերին Ներկայացվող Պահանջներ: 2015 թվականից սկսած՝ 50 կամ ավելի լրիվ դրույքով աշխատող ունեցող գործատուները, որոնք չեն ապահովում մատչելի պահովագրություն կամ տրամադրում են նվազագույն ստանդարտներին չհամապատասխանող ապահովագրություն, ենթակա կլինեն տուգանման:

Բժշկական Ապահովագրության Ծրագրերի Որոշ Փոփոխություններ

Affordable Care Act-ը պահանջում է, որ բժշկական ապահովագրության ընկերությունները փոխեն որոշ գործելակերպեր: Միեւնույն ժամանակ, այն պահպանում է նախքան օրենքի ընդունումը սպառողների ունեցած ապահովագրությունը պահելու իրավունքները:



Ըստ Affordable Care Act-ի՝ բոլոր բժշկական ապահովագրության ծրագրերը պետք է համապատասխանեն որոշակի չափորոշիչների:

Գների Բարձրացումներ:

Ապահովագրական ընկերությունները պարտավոր են արդարացնել ապահովագրական վճարների որեւէ ավելացում: Ապահովագրական ընկերությունները պարտավոր են ստացված գումարի 80 տոկոսը տրամադրել առողջության որակյալ խնամք տրամադրելուն, այլ ոչ թե վարչական ծախսերին, ինչպիսիք են աշխատավարձերը կամ հայտարարությունը:

Կյանքի Ընթացքում Անհատի Ստացած Առողջական Խնամքի Սահմանափակումներ Չկան:

Ապահովագրական ընկերություններն իրավունք չունեն սահմանելու հիմնական առողջապահական նպաստներից օգտվելու որեւէ առավելագույն գումարի սահմանափակում, որը նրանք վճարելու են անձի կյանքի ընթացքում:

Կանխարգելիչ Խնամք: Բժշկական ապահովագրության բոլոր նոր ծրագրերը պետք է ծածկեն կանխարգելիչ եւ բժշկական գնման (օրինակ՝ մամոգրաֆիայի եւ կոլոնոսկոպիայի), ինչպես նաեւ կրծքով կերակրող կանանց աջակցության, հակաբեղմնավորման եւ ընտանեկան բռնությունների գնման ծախսերը: Ապահովագրող ընկերությունները չեն կարող պահանջել համավճարներ եւ համատեղ ապահովագրություն կամ ծախսի մասնակցության որեւէ գումար գանձել այդ ծառայություններից օգտվելու համար:

Հիմնական Առողջապահական

Նպաստներ: Նոր վաճառված բժշկական ապահովագրության ծրագրերը պետք է ծածկեն այն ծառայությունների ծախսերը, որոնք դասակարգվում են հիմնական առողջապահական նպաստների հետեւյալ 10 կատեգորիաների մեջ՝

- Ամբուլատոր հիվանդների խնամք
- Շտապ օգնության ծառայություններ
- Հիվանդի հոսպիտալացում
- Մայրերի եւ նորածինների խնամք
- Հոգեկան առողջության, թմրադեղերի կամ ալկոհոլի չարաշահումների բուժում
- Դեղատոմսով տրվող դեղամիջոցներ
- Վերականգնման եւ ի սկզբանե չձեւավորված հմտությունների ուսուցանման ծառայություններ եւ սարքեր
- Լաբորատոր ծառայություններ
- Կանխարգելիչ եւ առողջական ծառայություններ, աջակցություն քրոնիկ հիվանդությունների դեպքում
- Մանկաբուժական ծառայություններ, ներառյալ բերանի խոռոչի եւ տեսողության խնամք

Գնահատման Նոր Համակարգ: Covered California ապահովագրական ծրագրերը կխմբավորվեն ըստ գնի եւ արժեքի՝ օգտագործելով միօրինականացված տեղեկություններ, որպեսզի կալիֆորնիացիները կարողանան կետ առ կետ համեմատել դրանք, ավելի հեշտ տեսնել սպասվող ծախսերը եւ ստանալ անհրաժեշտ ապահովագրությունը:

Կլինեն ապահովագրության հիմնական չորս աստիճաններ՝ պլատինե, ոսկե, արծաթե եւ բրոնզե: Երբ ծրագրի արժեքը բարձրանում է, ավելանում է նաեւ ամսական ապահովագրական մուծումը, սակայն երբ անհատը ստանում է բժշկական խնամք, գինը սովորաբար ավելի պակաս է: Կալիֆորնիացիները կարող են ընտրել վճարել բարձր ամսական ապահովագրական մուծում, այնպես որ բժշկական խնամքի կարիքի դեպքում գինը ավելի պակաս կլինի: Կամ նրանք կարող են ընտրել ավելի ցածր ամսական ապահովագրական մուծում, որը կնշանակի, որ բժշկական խնամքի կարիք ունենալու դեպքում ավելի շատ կվճարեն: Յուրաքանչյուրն իր ընտրությունն ունի:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք www.CoveredCA.com կայքէջը կամ զանգահարեք (888) 975-1142 հեռախոսահամարով:



CoveredCA.com

Covered California-ն նոր առցանց «շուկան» է, որ կհեշտացնի եւ մատչելի կդարձնի բարձրորակ առողջության ապահովագրություն գնելու, ինչպես նաեւ դրա վճարման համար ֆինանսական աջակցություն ստանալու: